



## **Ողջույն**

*Յարոսլավլի մարզը մի վայր է, որտեղ պատմությունն ու մշակույթը միաձուլվում են իրար:*

*Մենք հպարտ ենք, որ այստեղ բնակվում են տարբեր ազգերի մարդիկ:*

*Այդ բազմազանությունը մեր հարստությունն է, իսկ միմյանց նկատմամբ փոխըմբռնումն ու հարգանքը Յարոսլավլի մարզի բարօրության և միասնության հիմքն են:*

*Յուրաքանչյուր բնակիչ, անկախ ծագումից, իր ներդրումն ունի փոխադարձ հարգանքի և բարեկամության վրա հիմնված ամուր և կայուն հասարակության ստեղծման գործընթացում:*

*Միասին մենք կարող ենք հասնել մեծ հաջողությունների և հաղթահարել մեր ճանապարհին հանդիպող բոլոր դժվարությունները:*

# ՀԻՇԵՑՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ



Միգրացիոն  
հաշվառում



Աշխատանքային գործունեություն  
իրականացնելու համար  
արտոնագրի ստացումը



Աշխատանքային  
պայմանագիր



Պատասխանատվու  
թյան տեսակները



Ինչպես պետք է  
իրեն պահի անձը  
Ռուսաստանում

Ռուսաստան մուտք գործելիս ցանկացած օտարերկրյա քաղաքացու տրվում է միգրացիոն քարտ: Միգրացիոն քարտում ցանկալի է ընդգծել այցի նպատակը՝ «Աշխատանք»(սակայն ներկայումս դա պարտադիր չէ):

Այնուհետև, օտարերկրյա քաղաքացին պետք է ճանապարհվի դեպի ընդունող կողմի գտնվելու վայրը:



**Կանգնեք միգրացիոն հաշվառման**



**Ներկայացրեք փաստաթղթեր**



**Կնքեք պայմանագիր**

Ռուսաստան ժամանելուց հետո օտարերկրյա քաղաքացին պետք է միգրացիոն հաշվառման կանգնի: Դրա համար ձեզ հատկացվում է.

**30 օր`** եթե ԵԱՏՄ քաղաքացի եք

**15 օր`** եթե Ուզբեկստանի կամ Տաջիկստանի քաղաքացի եք

**7 օր`** եթե այլ երկրի քաղաքացի եք

**Ընդունող կողմ կարող է լինել.**

-շենքի /կացարանի/ սեփականատերը,

-իրավաբանական անձը,

-պետական մարմին կամ միջազգային կազմակերպություն, որը տրամադրել է կացարան բնակության համար

**Միգրացիոն հաշվառում**

Միգրացիոն քարտի վավերականության ժամկետը սահմանվում է Ռուսաստանում օտարերկրացու գտնվելու տևողությամբ: Առանց վիզայի երկրների քաղաքացիների համար այդ ժամկետն ընդհանուր առմամբ մինչև **90 օր է** յուրաքանչյուր 180 ժամանակահատվածի համար:

Տվյալ ժամկետը լրանալուց հետո **Դուք** կարող եք երկարաձգել ձեր միգրացիոն քարտի ժամկետը՝ հիմնվելով.

- Աշխատանքային պայմանագրին (1 տարուց ոչ ավելի ժամկետով),
- Աշխատանքի թույլտվության տրամադրում և դրա երկարաձգում,
- Աշխատանքային գործունեություն իրականացնելու համար արտոնագրի տրամադրում և դրա երկարաձգում կամ դրա վերաձևակերպում,
- Ժամանակավոր կացության թույլտվության կամ կացության թույլտվության ձևակերպում,
- Ռուսաստանի Դաշնության քաղաքացիություն ընդունելու համար փաստաթղթերի ներկայացում,
- Հայրենակիցների վերաբնակեցման ծրագրին մասնակցություն,
- Առողջական վիճակի պատճառով մեկնելու անհնարինություն,

Ընդունող կողմը կազմում է փաստաթղթերի փաթեթ և այն ներկայացնում միգրացիոն հաշվառման փաստաթուղթ ձևակերպելու համար: Կացության վայր ժամանման ծանուցագիրը վերանայվում է 1 աշխատանքային օրվա ընթացքում:

**Ժամանման ծանուցագրի ձևաթղթի կտրված մասը փաստաթուղթն ընդունած մարմնի կնիքով վավերացված փաստաթուղթ է, որը հավաստում է օտարերկրյա քաղաքացու միգրացիոն հաշվառումը Ռուսաստանում:**



## Աշխատանքային գործունեություն իրականացնելու համար արտոնագիրը փաստաթուղթ է, որը.

-իրավունք է տալիս օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին, ով ժամանել է Ռուսաստան վիզա չպահանջող կարգով, ֆիզիկական կամ իրավաբանական անձի մոտ աշխատելու համար, -թույլ է տալիս աշխատել միայն դրանում նշված մասնագիտությամբ,  
-գործում է միայն Ռուսաստանի տարածաշրջանում, որտեղ այն տրամադրվել է,  
-տրամադրվում է 18 տարին լրացած օտարերկրյա քաղաքացիներին,


Աշխատանքային գործունեություն իրականացնելու համար արտոնագիրն ունի գործողության սահմանափակ ժամկետ՝ մինչև 12 ամիս: Վարձատրությունն իրականացվում է արտոնագրի վավերականության յուրաքանչյուր ամսվա համար: Եթե ժամանակին չվճարեք արտոնագրի համար, այն կդադարի գործել:



**1**  
**Ժամանում**  
**Ռուսաստան**



**2**  
**Փաստաթղթերի**  
**նախապատրաստ**  
**ում**



**3**  
**Ֆիզիկական անձի**  
**եկամտահարկի**  
**վճարումը**



**4**  
**Փաստաթղթերի**  
**ներկայացում**



**5**  
**Արտոնագրի**  
**ստացումը**



**6**  
**Աշխատանքի**  
**ընդունում**



**Աշխատանքային պայմանագիրը** համաձայնագիր է աշխատողի և գործատուի միջև, որը սահմանում է նրանց փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները: Նման պայմանագրեր կարող են կնքվել ինչպես անձի, այնպես էլ ընկերության հետ:

## Աշխատանքային պայմանագրում պետք է նշվի.



աշխատանքի վարձատրության և աշխատավարձի պայմանները



աշխատավարձի վճարման կարգը և ժամկետները



աշխատանքային ժամերի պայմանակարգ



այլ կազմակերպությունում գործեր կատարելու հնարավորություն

## Աշխատողի իրավունքները

- բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրի պայմանները,
- գործատուին գրավոր տեղեկացնել աշխատանքից ազատվելու մասին 14 օր առաջ,
- պահպանել աշխատանքային կանոնակարգերը և անվտանգության տեխնիկաները,
- խնամքով վերաբերվել գործատուի գույքին և պիտույքներին,
- տեղեկացնել գործատուին մարդկանց կյանքին ու առողջությանը սպառնացող իրավիճակների մասին,



## Գործատուի պարտականությունները

- վճարել Ձեզ աշխատավարձ առանց ուշացումների կամ պահումների,
- ապահովել անվտանգ աշխատատեղ և աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանք,
- երկարացնել Ռուսաստանի տարածաշրջանում բնակության ժամանակավոր կացության ժամկետը աշխատանքային գործունեություն իրականացնելու համար արտոնագրի գործողության ժամկետով,
- իրազեկ դարձնել պաշտոնի հրահանգներին և աշխատանքային ժամկետացանկին /ժամանակացույցին/:

**Արտոնագիր ստանալուց հետո 2 ամսվա ընթացքում աշխատանքային պայմանագրի պատճենը պետք է ուղարկեք ՆԳՆ:**

## Աշխատողի պարտականությունները

- հրաժարվել կյանքի և առողջության համար վտանգավոր աշխատանքներ կատարելուց,
- հրաժարվել աշխատանքային պայմանագրում չնշված աշխատանքից,
- դադարեցնել աշխատանքը, եթե աշխատավարձը հետաձգվում է ավելի քան 15 օր: Դրա համար անհրաժեշտ է ներկայացնել գրավոր դիմում գործատուին:
- պահանջել աշխատանքային պայմանագրի պատճենը, հաշվարկային թերթիկները, աշխատավարձի վերաբերյալ տեղեկանքներ:





### **Միգրացիոն օրենսդրության խախտում**

- Ռուսաստանի տարածքում առանց փաստաթղթերի գտնվելը,
- Միգրացիոն հաշվառման կանգնելու կանոնների խախտումը,
- Աշխատանքն առանց արտոնագրի իրականացումը,
- Այլ տարածաշրջանում ձևակերպված արտոնագրով և այլ մասնագիտությամբ իրականացված աշխատանքային գործունեությունը,
- Արտոնագրի ձևակերպման ժամկետների չպահպանումը,
- Փաստաթղթերի ժամկետը լրանալուց հետո Ռուսաստանի տարածքում գտնվելը:



### **Վարչական պատասխանատվություն**

- Հասարակական կարգի խանգարում /խախտում/,
- Անպարկեշտ արտահայտություններ /հայհոյանք/ հասարակական վայրերում,
- Անարգական վերաբերմունք /մոտեցում/ քաղաքացիների նկատմամբ:

**Յարոսլավլի մարզում արգելվում է աղմկել 13-ն անց 00-ից մինչև 15-ն անց 00-ն, 22-ն անց 00-ից մինչև 6-ն անց 00-ն:**  
(ամռանը՝ հունիսի 1-ից օգոստոսի 31-ը՝ ժամը 23-ն անց 00-ից մինչև 6-ն անց 00-ն):



### **Քրեական պատասխանատվություն**

- Վանդալիզմ /բարբարոսություն/,
- Առողջությանը ծանր կամ միջին աստիճանի վնաս պատճառելը,
- հափշտակում, գողություն, կողոպուտ,
- Շորթում և այլն

Ռուսաստանն իրավական պետություն է, որտեղ գործում են օրենքներ, որոնց պարտավոր են հետևել բոլորը: Կախված օրենքի խախտման ծանրությունից՝ կարող եք բախվել տարբեր տեսակի պատասխանատվության:



### Խախտումների համար պատիժների տեսակները

	✓		Վարչական կալանք
		✓	Կալանք
✓	✓		Վտարում Ռուսաստանից
		✓	Արտաքսում
		✓	ազատագրկություն բանտում
		✓	Ռուսաստան մուտք գործելու արգելք
	✓		Պարտադիր աշխատանքներ
✓	✓	✓	տուգանք



## **Պահպանեք օրենքները**

Ռուսաստանը մի պետություն է, որտեղ բոլոր խնդիրները կարելի է լուծել օրինական ճանապարհով. դրա համար հարկ չկա կաշառք տալ, «պայմանավորվածություններ ձեռք բերել», «ծանոթներ» գտնել: Քանի դեռ մենք բոլորս հետևում ենք օրենքներին, այս օրենքները մեզ օգնության կգան բարդ իրավիճակներում:

## **Չարգեք մեծերին**

Ռուսաստանում ընդունված է լսել մեծերին և օգնել նրանց. հաշվի առնել նրանց խորհուրդները, զիջել տեղը տրանսպորտում կամ հերթում: Դա վերաբերում է ոչ միայն տարիքին, այլև կարգավիճակին: Եթե տարիքով մեծ մեկը կամ աշխատավայրում ինչ-որ մեկը ձեզ ինչ-որ բան է ասում, փորձեք ուշադրություն դարձնել նրա ասածներին:

## **Չուսպ եղեք հույզերը դրսևորելիս**

Ռուսաստանում հաճախ ասում են, որ «երջանկությունը լռություն է սիրում»: Սակայն դրա պատճառն այն չէ, որ ռուսները պատրաստ չեն հաղորդակից անել իրենց երջանկությանը, բնավ, ընդհակառակը: Չաճելի է դրան մասնակից դարձնել ամենամտերիմ մարդկանց: Իսկ մնացած բոլորը պարտադիր չէ տեղեկանան այդ մասին, չէ որ նրանք ունեն իրենց գործերը և իրենց խնդիրները: Ո՞վ գիտի, գուցե փողոցում որևէ անցորդը միայն կդառնանա, որ ինքն այնքան երջանիկ չէ, որքան դուք: Ուստի աշխատեք հույզերը դրսևորել ոչ այնքան շատ, որ չխանգարեք շրջապատին:

## **Եղեք քաղաքավարի և օգնելու պատրաստ**

Յուրաքանչյուր մարդու կյանքում լինում են դժվարություններ, դա անխուսափելի է: Ռուսաստանում բնակիչները պատրաստ են օգնության ձեռք մեկնել ցանկացած մարդու, եթե քաղաքավարի խնդրեք: Ուստի, եթե հայտնվեք բարդ իրավիճակում, պարզապես խնդրեք ձեզ շրջապատող մարդկանց օգնել ձեզ, և նրանք ձեզ չեն մերժի: Պարզապես խնդրեք քաղաքավարի և դիմեք «Դուք»-վ, և այդ դեպքում ամեն ինչ անպայման կստացվի:

## **Հարգեք այլ մարդկանց հարմարավետությունը**

Ռուսաստանում անձնական տարածքն ու հարմարավետությունը բարձր են գնահատվում, ուստի, եթե ինչ-որ մեկը խախտում է այն, ռուսները կարող են դժգոհ լինել: Ահա ինչու Ռուսաստանում ընդունված չէ հասարակական վայրերում բարձր խոսել, երաժշտություն լսել, միմյանց հրմշտել և այլն: Ձգտեք այդպես չվարվել, և կտեսնեք, թե ինչպես կփոխվի շրջապատի վերաբերմունքը ձեր հանդեպ:

## **Հարգեք ուրիշ մշակույթը**

Ռուսաստանը բազմազգ երկիր է, որտեղ բազմաթիվ մշակույթներ միահիյուսված են մեկում: Եվ ռուս մարդիկ պատրաստ են հարգելից վերաբերվել օտար մշակույթին, եթե միայն դուք նման կերպ վերաբերվեք: Շատ կարևոր տոներ և հուշարձաններ կան, որոնք շատ թանկ են մեզ համար: Հարգանքից վերաբերվեք նրանց, այդ դեպքում Ձեր ավանդույթներին նույն վերաբերմունքը կդրսևորեն:



# ՌՈՒՄԱՍՏԱՆԸ

ԴԵՄ Է ԱՅԱԲԵԿՉՈՒԹՅԱՆԸ



ՌՈՒՄԱՍՏԱՆՈՒՄ ԱՅԱԲԵԿՉԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ  
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԳՈՐԾԵԼՈՒ  
ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍԿՈՒՄ Է ԶՐԵԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏԿՈՒԹՅՈՒՆ՝ ԸՆԴՀՈՒՊ ՄԻՆՉԵՎ  
ՑՄԱՅ ԱԶԱՏԱԶՐԿՈՒՄ

ՄԻ ՇՓԿԵՔ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ, ՈԿՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ  
ԿԱՊ ՈՒՆԵՆԱԼ ԱՅԱԲԵԿՉՆԵՐԻ ՀԵՏ

ՄԻ ՀԱՄԱՁԱՅՆԿԵՔ ԱՌԱՔԵԼ ԱՆՀԱՅՏ  
ԱՌԱՔՈՒՅԹ, ԱՆԳԱՄ ԵԹԵ ՁԵԶ ԳՈՒՄԱՐ  
ԱՌԱՋԱՐԿԿԵՆ ԴՐԱ ՀԱՄԱՐ

ՄԻ ՈՒՂԱՐԿԵՔ ՄԻՋՈՑՆԵՐ ՁԵԶ ԱՆԾԱՆՈԹ  
ՄԱՐԴԿԱՆՑ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ, ՆՐԱՆՔ  
ԿԱՐՈՂ ԵՆ ՆԵՐԳՐԱԿԿԱԾ ԼԻՆԵԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ԱՅԱԲԵԿՉԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ

# ԱՆՀԱՊԱՂՈՐԵՆ ՀԱՅՏՆԵՔ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Եթե դուք տեղեկանում եք ահաբեկչական կամ ծայրահեղական կազմակերպությունների գործունեության մասին
- Ձեզ հակում են ահաբեկչական բնույթի հանցագործություն կատարել, հավաքագրում են ահաբեկիչների շարքերում, առաջարկում են փողեր փոխանցել
- Ձեզ հայտնի է դարձել ռազմական գործողություններին մասնակցելու համար արտերկիր մեկնելու անձի մտադրությունների մասին

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
112

Ռուսաստանի Անվտանգության դաշնային ծառայության  
Յարոսլավլի մարզի հերթապահ) **(4852) 20-00-40**

Ռուսաստանի ՆԳՆ Յարոսլավլի մարզի  
ծայրահեղականության դեմ պայքարի կենտրոն  
**(4852) 59-12-51**

ԴԱ ԿՓՐԿԻ ՇԱՏ ՄԱՐԴԿԱՆՑ ԿՅԱՆԵՐ



# ՌՈՒՄԵՐԵՆԻ՝ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵՉԿԻ, ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Համաձայն Ռուսաստանի Դաշնության գործող օրենսդրության, օտարերկրյա քաղաքացիների համար քննությունը հանձնելը պարտադիր է հետևյալ իրավիճակներում.

- Նախքան բնակության ժամանակավոր թույլտվություն (РВП) և բնակության թույլտվություն (Вид на жительство) ստանալու համար միգրացիոն ծառայություն դիմելը
- Աշխատանքային վիզա ստանալուց առաջ
- Աշխատանքային գործունեություն ծավալելու նպատակով Ռուսաստան ժամանած առանց վիզայի միգրանտների համար, ովքեր միաժամանակ ցանկանում են ստանալ օրինական աշխատանքի թույլտվություն

**Քննությունների ընդունելությունն իրականացվում է**



ք. Յարոսլավլ, Պոլուշկինա Ռոշչա փող.,  
16 տ., 51 շինություն հասցեում



Տեղեկությունների համար հեռախոսահամար՝  
+7(905)638-16-64



E-mail:  
[migrant@uniyar.ac.ru](mailto:migrant@uniyar.ac.ru)



Handwriting practice lines consisting of 20 horizontal dashed lines.





Handwriting practice lines consisting of 20 horizontal dashed lines.



ք. Յարոսլավլ, Օկտյաբրյա պող., 88 «բ» (1 հարկ)  
E-mail: [domnarodovyao@mail.ru](mailto:domnarodovyao@mail.ru)



Յարոսլավլի մարզի  
ժողովուրդների տան  
կայքէջը



Ռուսաստանի ՆԳՆ  
Յարոսլավլի մարզի  
վարչության  
կոնտակտային  
տեղեկույթը և  
կառուցվածքը



Յարոսլավլի մարզի  
ժողովուրդների տան  
համար խոսմբը  
"ВКонтакте"  
հարթակում



Յարոսլավլի մարզի  
ժողովուրդների տան  
Տելեգրամ  
հեռուստաալիքը